ՀԱՅՐ ՄԻՔԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

61. ՉԱԽՈՂՎԱԾ ԿՈՉՈՒՄ (Մարկ. Ժ 17—22)

Ժ 17 Երբ նա այնտեղից ճանապարհ ելավ, ահա մեծահարուստ մեկը վազելով ծնկի իջավ, հարցրեց նրան ու ասաց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ»:

18 Եվ Հիսուս նրան ասաց. «Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստված:

19 Պատվիրանները գիտես. մի՛ շնանար, մի՛ սպանիր, մի՛ գողանար, սուտ մի՛ վկայիր, մի՛ զրկիր, պատվի՛ր քո հորը և մորը»:

20 Նա պատասխանեց նրան և ասաց. «Վարդապե՛տ, այդ բոլորը իմ մանկությունից ի վեր պահել եմ. արդ, ի՞նչ եմ պակաս թողել»:

21 Եվ Հիսուս նրան նայելով՝ սիրեց նրան և ասաց. «Քեզ մե՛կ բան է պակասում. եթե կամենում ես կատարյալ լինել, գնա-վաճառի՛ր ինչ որ ունես ու աղքատներին տուր և երկնքում գանձեր կունենաս. և վերցրո՛ւ խաչը ու արի՛ իմ ետևից»:

22 Եվ մարդը այդ խոսքի վրա խոժոռված՝ գնաց տրտում, որովհետև շատ ունեցվածք ուներ:

Մինչ Մարկոսի պատմությունը ավելի ու ավելի է մոտենում Քրիստոսի մահվան եղելության, ավետարանիչը բերում է ձախողված կոչումի մասին մի տխուր վկայություն: Մեծահարուստը, որը եկել էր հանդիպելու Հիսուսին, չկարողացավ պահանջված չափով մասնակից դառնալ չարչարանքի ավետարանին: Նրա համար դա նշանակում էր «զրկանք»:

Առավել ցավալի էր այն, որ մարդը շատ լավ էր ըմբռնել իրեն ուղղված հրավերի տարողությունը: Հրավերը գալիս էր հենց Աստծուց: Մոտենալով Հիսուսին՝ նա ծնկի է գալիս: Դա գրեթե ծիսական մի շարժում էր: Իսկ երբ դիմում է Տիրոջը, նրան «բարի» է որակում: Հիսուս նրան հասկացնում է նրա այդ վերաբերմունքի լրջությունը. «Ինձ այդպես անվանելով՝ դու ապացուցում ես, որ քեզ ուղղելիք իմ խոսքերը համարում ես որպես Աստծուց եկող խոսքեր. եթե դու դրանք մերժես, մերժած կլինես շատ բան»:

Ինչ որ Հիսուս նախ պահանջում է իր խոսակցից, ավելի մի բան չէ, քան այն, ինչ հարկավոր է անել լավ հրեա լինելու համար: Նա նրան հիշեցնում է որոշ պատվիրաններ, որոնք Մովսեսի միջոցով Իսրայելի ժողովրդին տրված Օրենքի հիմնական մասն են կազմում.

Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի երկարակյաց լինես երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:
Մի՛ սպանիր:
Մի՛ շնանար:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № Բ—Ժ-ից:

Մի՛ գողանար:
Սուտ վկայություն մի՛ տուր քո ընկերոջ մասին:
(Ելից Ի 12—16)

Հիսուս ավելացնում է մի պարզ նախադասություն, որ չկա Տասնաբանյա պատվիրանում. «Մի՛ զրկիր»: Դա կարելի է և այսպես հասկանալ. «Անիրավություն մի՛ արա»: Այս նախադասությունը ամփոփում է Հին Կտակարանի բոլոր պատվիրանները, որոնք չափազանց շատ են այդպիսի մի կարճ խոսակցության ընթացքում թվարկվելու համար:

Մի մարդու, որին չի ճանաչում, Հիսուս մատնանշում է հրեական Օրենքը որպես կյանքի կանոն, որն առաջնորդում է Աստուծո Թագավորությանը:

Հիսուսի դիմաց կանգնած այդ մարդու դրաման այն է, որ նա լավ հրեա է, բայց պատրաստ չէ դրանից ավելին լինելու: Պահանջելով, որ նա դառնա աղքատ և հետևի իրեն, Հիսուս վեր է հանում ավետարանական բարոյականի ինքնատիպությունը: Այդ բարոյականը չի վերածվում ինչ-որ պատվիրանների, որոնք պետք է պահել, և ոչ էլ թույլատրելիի և արգելվածի օրինագրման: Յուրաքանչյուր մարդու համար այդ բարոյականն այնտեղ է, որտեղ նա գտնվում է: Դա մի քայլ ավելին անելու պահանջն է: Իր մարմինը վաճառող պոռնկի համար այդ քայլը կարող է կայանալ իր վաստակած փողը բարի մի նպատակի համար գործածելու մեջ: Այդ մեծահարուստի նման արդեն իսկ արդար և բարեպաշտ մի մարդու համար, որն ուզում է տիրանալ հավիտենական կյանքին, հնարավոր միակ առաջխաղացումը իր ունեցվածքից զրկվելն է՝ Հիսուսի հետ միասին նետվելու համար նրա աշակերտների արկածալից կյանքի մեջ: Պետք է, որ նա հրաժարվի իր նյութական հարստություններից՝ անտեսանելի մի գանձի տիրանալու համար:

Ավետարանով ապրել՝ նշանակում է անհրաժեշտորեն անցնել որոշ ձևի մահվան բովից: Այն մահը, որ Հիսուս պահանջում է իր խոսակցից, նահատակությունը չէ: Տերը շատ լավ գիտի, ինչպես արդեն ասել է, որ ոմանք «մահ չպիտի ճաշակեն, մինչև որ տեսնեն Աստուծո Թագավորությունը՝ զորությամբ եկած» (Մարկ. Թ 1): Այն ժամանակ է, որ, իր ունեցվածքի մահով, մեծահարուստը պիտի գտնի Աստուծո Թագավորության ճանապարհը:

Մարկոսի համար քրիստոնեական ամեն կյանք մի Զատիկ է: Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել դրան իր չափով, որովհետև սիրված է Աստծուց: Գորովալից հայացքը, որ Հիսուս ուղղում է նրան, ում կանչում է, այդ առաջարկը դնում է Քրիստոսի հետ սիրո երկխոսության շրջանակի մեջ (համար 21):

Հասկանալ այդ և հրաժարվել՝ նշանակում է ինքն իրեն դատապարտել տխրության (համար 22):

62. ԱՍՏՈՒԾՈ ՏՎԱԾ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Մարկ. Ժ 23—31)

Ժ 23 Եվ Հիսուս այս կողմ, այն կողմ նայելով, ասաց իր աշակերտներին. «Ինչքա՜ն դժվարին է Աստուծո արքայությունը մտնել նրանց համար, որ հարստություն ունեն»:

24 Աշակերտները զարմացած էին նրա այս խոսքերի վրա. իսկ Հիսուս դարձյալ պատասխանեց նրանց և ասաց. «Զավակնե՛րս, ինչքա՜ն դժվար է Աստուծո արքայությունը մտնել նրանց համար, որ իրենց հույսը դրել են հարստության վրա:

25 Ավելի հեշտ է, որ ուղտը ասեղի ծակից անցնի, քան թե մի մեծահարուստ Աստուծո արքայությունը մտնի»:

26 Եվ աշակերտները առավել ևս էին զարմանում ու միմյանց ասում. «Այս ուրեմն ո՞վ կարող է փրկվել»:

27 Նայելով նրանց՝ Հիսուս ասաց. «Մարդկանց կողմից այդ անհնար է, բայց ո՛չ Աստուծո կողմից»:

28 Պետրոսն սկսեց նրան ասել. «Ահավասիկ մենք թողել ենք ամեն բան և եկել ենք քո ետևից»:

29 Հիսուս պատասխանեց և ասաց «Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկա մեկը, որ թողած լինի տուն, կամ եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ որդիներ, կամ ագարակներ ինձ համար կամ Ավետարանի համար,

30 Եվ այժմ, այս ժամանակի մեջ հարյուրապատիկ չստանա՝ տներ և եղբայրներ և քույրեր և մայրեր և որդիներ և ագարակներ՝ հալածանքներով հանդերձ, և այն աշխարհում, որ գալու է՝ հավիտենական կյանք:

31 Սակայն շատեր, որ առաջին են, պիտի լինեն վերջին, իսկ վերջիններ՝ առաջին»:

Խե՜ղճ հարուստներ:

Անկասկած Հիսուս ևս, խորապես տխուր, որ իրեն հետևելու առաջարկը մերժվել է մեծահարուստի կողմից, սկսում է կարեկցել նրանց, որոնց կապվածությունը իրենց ունեցվածքին արգելում է նրանց մոտենալ Աս-

ստուծո Թագավորությանը: Նա նախ մի հայացք է գցում իր շուրջը (համար 23): Հավանաբար ամբոխի մեջ կան մարդիկ, որոնց առողջ տեսքը և գեղեցիկ կգեստները մատնում են նրանց մեծահարուստ լինելը: Նա ցավում է նրանց համար և իր վիշտը հայտնում է իր աշակերտներին:

Նրանք, իհարկե, ոչինչ չեն հասկանում: Աստվածաշնչական բազմաթիվ գրվածքներում հարստությունը համարվել է երկնային օրհնություն: Ինչո՞ւ իրենց տերը այդպես նայում է նրանց, ասես ինչ-որ պակասություն ունենային: Եվ Հիսուս նրանց համար նորից է կրկնում իր ուսուցումը. դժվար է Աստուծո արքայությունը մտնել (համար 24), իսկ հարուստների համար՝ մասնավորապես (համար 25):

Շատ է խոսվել այն պատկերի մասին, որ Հիսուս գործածել է հասկացնելու համար իր միտքը. դա ուղտի պատմությունն է, որը չի կարողանում անցնել ասեղի ծակից: Մարդիկ փորձել են բազմաթիվ բացատրություններ տալ, որպեսզի ավելի տրամաբանական դարձնեն այն: Ենթադրել են, օրինակ, որ Երուսաղեմում իբր գոյություն է ունեցել «Ասեղի դուռ» անունով ծանոթ մի նեղ դուռ, որտեղով ապատորեն չեն կարողացել անցնել քարավաններն ու նրանց բեռները: Սակայն այդ դռնից այսօր չի մնացել որևէ ծանոթ հետք: Մտածել են նաև, որ «ուղտ» բառը հունարեն սխալ թարգմանություն է եղել սեմական մի բառի, որը նշանակել է «ծովային հաստ պարան» կամ «խարխապարան»: Ուրեմն Հիսուս արամերեն լեզվով ասած պիտի լիներ. «Ավելի հեշտ է, որ խարխապարանը ասեղի ծակից անցնի, քան թե մի մեծահարուստ Աստուծո արքայությունը մտնի»:: Սա, անշուշտ, ավելի տրամաբանական է, քան ուղտի պատմությունը: Բայց այս դեպքում դարձյալ արամերեն այդ բառի հաստատումը ստույգ չէ:

Անկասկած պետք է պահել պատկերի ամբողջ ուժը իր անկապակցությամբ հանդերձ: Իր մեջքի վրա ծանր բեռ կրող ուղտի պատկերը հիանալիորեն ներկայացնում է իր ունեցվածքի մեջ խճճված մեծահարուստին: Արևելյան մտածելակերպը չի վախենում չափազանցություններից: Նոր Կտակարանից դարեր հետո գրված Ղուրանում հանդիպում ենք մի հատվածի, որը շատ մոտ է ավետարանական վերոհիշյալ խոսքին.

«Արդարև, նրանք, ովքեր մոլորություն են համարում մեր ուսմունքը և արհամարհում այն, երկնքի դռները երբեք չպիտի բացվեն նրանց առաջ: Նրանք արքայություն կմտնեն այն ժամանակ միայն, երբ ուղտը անցնի ասեղի ծակից: Ահա այսպես պիտի վարձատրենք ոճրագործներին»:

(Ղուրան Է 38)

Աշակերտների վախը կրկնապատկվում է: Նրանք մտածում են. մենք բոլորս ինչ-որ բանով ավելի կամ նվազ հարուստ ենք. եթե Աստուծո արքայության մուտքի դուռը այդքան նեղ է, ուրեմն ո՞վ կարող է անցնել (համար 26): «Ով կարող է փրկվել»:

Սովորաբար երբ Հիսուսին այս կարգի հարցեր են ուղղում, նա ուղղակիորեն չի պատասխանում (համար 27): Աշակերտները կցանկանային, որ Հիսուս կատարեր այնպիսի մի դասակարգում մարդկանց միջև, որը թույլ տար որոշել, թե ովքեր են օգտվելու Աստուծո արքայությունից և ովքեր դուրս են թողնվելու: Շատ փորձիչ է մի պատվար քաշելով աշխարհը բաժանել երկուսի և պատվարի լավ կողմը իրեն վերապահել:

Փոխանակ ընդունելու այս կարգի մի բաժանում, Հիսուս բոլորի՛ն է ուղղում Աստուծո Թագավորության հրավերը: Ոչ ոք, այսպես ասած, իրավունքներ չունի Աստուծո Թագավորության նկատմամբ, ոչ ոք ի վիճակի չէ, ըստ ընդունված մի արտահայտության, «պատրաստելու իր փրկությունը», բոլորը պետք է ձգտեն այնպիսի մի երջանկության, որը գալիս է իրենց հնարավորության սահմանից այն կողմ գտնվող մի տեղից: Դրան հակառակ, Աստված կարող է ամե՛ն ինչ անել, նույնիսկ փրկել ամենահավատարիմ և ամենաողորմելի մարդկանց: Փրկությունը Աստուծո ձրի մեկ պարգևն է, որը տեսապես և լայնորեն առաջարկվում է, բայց երբեք մեկընդմիշտ ձեռք չի բերվում: Մարկոսն այստեղ արտահայտվում է այնպիսի խոսքերով, որոնք նման են Պողոս առաքյալի խոսքին.

Բոլորը մեղք գործեցին և զրկվեցին Աստուծո փառքից ու նրա շնորհիվ ձրի արդարացան Քրիստոս Հիսուսով եղած փրկությամբ (Հռոմ. Գ 23—24):

Աստուծո աչքին արդարներ չկան: Կարելի չէ մարդկանց բաժանել լավերի և վատերի, ընդունելիների և մերժելիների: Ոչ ոք մեկ ուրիշից ավելի իրավունք ունի փրկվելու: Պարզապես բոլորս էլ ավելի կամ նվազ չափով ծանրաբեռնված ենք մեղքով և հետևաբար ավելի կամ նվազ ընդունակ՝ ստանալու ձրի տրվող մի բարիք:

Պետրոսը ինչ-որ բան հասկանում է այս բոլորից, եթե նույնիսկ դեռ երկար ճանապարհ ունի կտրելու: Նա աշակերտներին ներկայացնում է որպես Հիսուսի առաջ բաց և դատարկ ձեռքերով կանգնած մարդկանց,

որոնք թողել են ամեն ինչ՝ հետևելու համար նրան (համար 28):

Հիսուս պատասխանում է՝ դարձյալ շարունակելով Պետրոսի հարցը. ամեն մարդ, որ տվել է, պիտի ստանա, և ոչ թե միայն աշակերտները: Եվ ինչ որ պիտի ստանա, շատ ավելին պիտի լինի, քան այն, ինչ թողնելու է: Թողնում ես տուն **կամ** հայր **կամ** մայր (համար 29)... ստանում ես տներ և մայրեր... (համար 30): Հասարակաց չափ չկա այն բանի միջև, ինչից մարդ հրաժարվում է և այն բանի, ինչ Աստված տալիս է:

Աստուծո պարգևների այս լիառատությունը հենց այսօրվա համար է և շուռ է տալիս հասարակականորեն ընդունված շատ արժեքներ: Նրանք, ովքեր ամեն ինչ են տվել, լիանում են նոր հարստություններով. շատ վերջիններ դառնում են առաջիններ և փոխադարձաբար: Հիսուս ինքը վաղուց ունեցավ այս փորձառությունը, երբ Ավետարանը քարոզելու համար թողնելով յուրայիններին՝ վերագտավ մի նոր ընտանիք:

Ով Աստուծո կամքն է կատարում, նա՛ է իմ եղբայրը և քույրը և մայրը (Մարկ. Գ 35):

Կանգ առնելով այս կետի վրա՝ Մարկոսը հայտնապես դիմում է Հռոմի քրիստոնեական համայնքին, որի համար գրում է իր ավետարանը: Հալածանքները խստացել էին. ով կապվում էր Քրիստոսին, ստիպված էր լինում հաճախ ցավով հեռու մնալ յուրայիններից: Բայց ահա պատրաստ էր մի նոր ընտանիք՝ Եկեղեցին, որը օգնում էր տանելու բոլոր դժվարությունները և ավետում հավիտենական կյանքի երջանկությունը:

Ընտանեկան որոշ կապերի անխուսափելի խզումը հոգեկան տվայտանքի երևույթներից մեկն է, որ ամեն մարդ կոչված է ապրելու: Աստված այդ գիտե: Գիտե նաև հաշվի առնել այդ:

63. ԵՐՐՈՐԴ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Մարկ. Ժ 32—34)

Ժ 32 **Երուսաղեմ ելնելու ճանապարհի վրա էին. Հիսուս նրանցից ավելի առաջ էր գնում. իսկ նրանք, որ նրա ետևից էին գնում, կարմացած էին ու վախենում էին: Եվ նա նորից իր հետ վերցնելով տասներկուսին՝ առանձին, սկսեց ասել նրանց, թե ինչ բաներ պիտի պատահեն իրենց:**

33 **«Ահա ելնում ենք Երուսաղեմ. և մարդու Որդին պիտի մատնվի քահանայապետներին ու դպիրներին, և նրան մահվան պիտի դատապարտեն ու հեթանոսների ձեռքը պիտի մատնեն.**

34 **Նրան պիտի ծաղրեն. նրան պիտի ծեծեն ու նրա վրա պիտի թքեն. և պիտի սպանեն. և երրորդ օրը նա հարություն պիտի առնի»:**

Երրորդ և վերջին անգամ լինելով՝ Հիսուս իր աշակերտներին հայտնում է իր մոտալուտ մահվան և երեք օրից հետո իր հարության մասին: Զգացվում է, որ այս երեք հայտնությունների մեկից դեպի մյուսը աստիճանաբար ավելանում է պատմության եղերական լարվածությունը:

— Առաջին հայտնությունը (Մարկ. Ը 31—33) անսպասելի էր: Պետրոսի կողմից բացահայտվում էր Հիսուսի ինքնությունը, որպես Քրիստոսի: Հայտնել յուրայիններին, որ ինքը մեռնելու է, նշանակում էր շուռ տալ ամեն ինչ, նշանակում էր նրանց հոգեկան անդորրը վրդովել՝ չհաշված նաև այն, որ Մեսիայի ձախողությունը աներևակայելի է հրեայի համար: Պետրոսի հակադրեցությունն արդեն ցույց էր տվել աշակերտների լիակատար անհասկացողությունը:

— Երկրորդ հայտնությունը (Մարկ. Թ 30—32) տեղի էր ունեցել ավելի լարված մի մթնոլորտում: Հիսուս գաղտնի էր անցնում Գալիլիայի միջով: Քարոզչական շրջապտույտների երբեմնի փառահեղ ժամանակներն այլևս չկային: Վերհիշեցնելով այն չարչարանքները, որոնց պիտի ենթարկվեր շուտով, Հիսուս կարծես մեծ դժկամությամբ մի մեխ էր խրում իրեն հետևողների գլխի և սրտի մեջ:

— Այժմ, նախքան Հիսուս երրորդ անգամ նույն բանը կկրկներ, վախն արդեն բռնել էր աշակերտներին: Յուրաքանչյուրը գիտեր, որ ինքը իր կյանքում մի տեղ պետք է վերապահի մահվան կամ որևէ անձնազոհության համար: Դեպի Երուսաղեմ տանող կառիվեր ճանապարհի վերջին կիլոմետրերը վերածվում են տանջալից մի ուղևորության: Հիսուս դրա գլխավոր վոհն է. բայց աշակերտներից յուրաքանչյուրն էլ յուրատեսակ մի վոհ է:

Այս եղերական առաջխաղացման պատկերով Մարկոսն արտահայտում է այն միտքը, թե քրիստոնյայի համար որքա՞ն երկար և որքա՞ն դժվարին է ընդունել հարության ճանապարհը: Հարությունը հորիզոնում է անշուշտ, սակայն նախ պետք է անցնել չարչարանքների բովից. իսկ յուրաքանչյուր ոք դրան դիմադրում է իր ամբողջ էությամբ:

Զուգադիպելով ավելի ծանր մի պահի՝ այս երրորդ հայտնությունը միևնույն ժամանակ նաև ավելի որոշակի է, քան նախորդները: Այս հայտնության մեջ մեկը մյուսի ետևից ոգեկոչված են Ավագ հինգշաբթի և Ավագ ուրբաթ օրերի ամենապլվելի դրվագները:

— **Քահանայապետների և դպիրների** պատասխանատվությունը Հիսուսի դատապարտության մեջ.

— Միջամտությունը մի հեթանոսի, ինչպիսին Պիղատոսն է.

— **Ծաղր, թուք ու մուր, ծեծ:**

Հիսուսի չարչարանքների պատմությունը, ըստ սուրբ Մարկոսի, արդեն այստեղ ուրվագծվում է այնպես, ինչպես ավետարանիչը պիտի հաղորդի հետագայում:

Տասներկու աշակերտները այժմ մանրամասնորեն տեղյակ են, թե ինչ պետք է պատահի իրենց տիրոջը: Որոշակի մի հեգնանքով Մարկոսը ցույց է տալիս, որ նրանք նախօրոք գիտեն, թե ինչպիսին պիտի լինի խաչի ճանապարհը: Բարեբախտաբար Հիսուս նրանց նկարագրել է դա, որովհետև երբ իրադարձությունները տեղի ունենան, նրանք այնտեղ չպիտի լինեն՝ վկա լինելու համար: Բոլորն էլ վախկոտների պես փախուստ պիտի տան:

64. ՓԱՌՔԸ ԿԱՄ ԽԱՉԸ (Մարկ. Ժ 35—40)

Ժ 35 Զեբեդեոսի որդիները՝ Հակոբոսը և Հովհաննեսը, գնացին նրա մոտ և ասացին նրան. «Վարդապե՛տ, ինչ որ քեզնից պիտի խնդրենք, կամենում ենք, որ անես մեզ համար»:

36 Եվ նա ասաց նրանց. «Ի՞նչ եք կամենում ինձնից, որ անեմ ձեզ համար»:

37 Եվ նրանք ասացին նրան. «Շնո՛րհ արա մեզ, որ նստենք մեկս քո աջում և մյուսս՝ ձախում՝ քո փառքի մեջ»:

38 Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «Չեք իմանում, թե ինչ եք խնդրում. կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ»:

39 Եվ նրանք ասացին նրան. «Կարող ենք»: Եվ Հիսուս նրանց ասաց. «Այն բաժակը, որ ես խմելու եմ, կխմեք, և այն մկրտությունը, որով ես մկրտվելու եմ, նրանով կմկրտվեք.

40 Բայց իմ աջում և ձախում նստեցնելը ես չէ, որ պիտի տամ, այլ տրվելու է նրանց, որոնց համար պատրաստված է»:

Իր չարչարանքների մասին Հիսուսի յուրաքանչյուր հայտնության ժամանակ աշակերտները միշտ ցույց էին տալիս անպատեհ մի հակազդեցություն: Առաջին հայտնությունից հետո Պետրոսն էր, որ խստորեն հանդիմանում էր իր տիրոջը (Մարկ. Ը 32—33): Երկրորդից հետո ամբողջ խումբը սկսել էր մտահոգվել, թե իրենց մեջ ո՛վ է առաջինը (Մարկ. Թ 33—37): Այժմ էլ երկու եղբայրները՝ Հակոբոսն ու Հովհաննեսն են պահանջում լավագույն տեղերը Հիսուսի փառքի մեջ, որ նա ստանալու է Աստծուց: Ճակատագրի ինչպիսի՜ հեգնանք: Երբ Հիսուս խաչի վրա պիտի ավանդեր իր հոգին, նրա աջ և ձախ կողմում պիտի լինեին երկու ավազակներ, որոնք պիտի բաժանեին նրա տանջանքները.

Եվ նրա հետ խաչեցին երկու ավազակներ, մեկը նրա աջում և մյուսը՝ ձախում (Մարկ. ԺԵ 27):

Այն երկու տեղերը, որ Հակոբոսն ու Հովհաննեսը պահանջում են, նախանձելի ոչինչ չունեն իրենց մեջ: Եվ հենց այդ է, որ Հիսուս փորձում է հասկացնել նրանց: Փառքից առաջ հարկավոր է տառապել: Այդ են արտահայտում Հիսուսի խոսքի մեջ օգտագործված բաժակի և մկրտության երկու պատկերները:

Հին Կտակարանում բաժակը երբեմն երանության խորհրդանշան է. բայց այն հաճախ նաև կզվանք պատճառող հեղուկով լցված դառնության բաժակ է, որ պետք է խմել ամեն գնով: Եսայի մարգարեի գրքում այդ մասին խոսվում է այն աղետի կապակցությամբ, որին ենթարկվեց Նաբուգոդոնոսորի կողմից ավերված Երուսաղեմը 587 թվականին Քրիստոսից առաջ: Մարգարեն կոչ է անում քաղաքին վերստին ոտքի կանգնել այն նվաստացումից հետո, որ իր բաժինը եղավ.

Զարթի՛ր, զարթի՛ր, վե՛ր կաց, Երուսաղեմ,
Դու, որ խմեցիր Տիրոջ ձեռքից
Բաժակը նրա բարկության.
Լայնաբերան բաժակը կործանման
Դու խմեցիր, քամեցիր:

(Եսայի ԾԱ 17)

Հիսուս ինքն էլ, իր ձերբակալությանը նախորդող վերջին աղոթքի մեջ, պիտի խնդրեր Հորը, որ խնայեր իրեն տառապանքի բաժակը.

Աբբա, Հա՛յր, ամեն ինչ հնարավոր է քեզ.
Այս բաժակն ինձնից հեռացրո՛ւ,
Բայց ոչ թե ինչպես ե՛ս եմ կամենում,
Այլ՝ ինչպես կամենում ես դո՛ւ:

(Մարկ. ԺԴ 36)

Ինչ վերաբերում է մկրտությանը, որը ջրի մեջ թաթախման մի շարժում է, ուր ամբողջովին անհետանում է մարմինը, նմանապես մահվան խորհրդանշան է: Այն հետո՛ միայն խորհրդանշում է կյանքը, երբ մկրտվողը ջրից դուրս է գալիս ապատ օդ:

Ահա ա՛յս է, որ Հիսուս պիտի ապրի: Եվ նրա հետ լինելու համար ա՛յս պետք է ապրել: Հետագայում Հակոբոսը մարտիրոսի մահ պիտի ունենար՝ սպանվելով Հերովդես թագավորի ձեռքով (ըստ Գործք Առաքելոցի, ԺԲ 2): Գալով Հովհաննեսին՝ նա, ըստ քրիստոնեական ավանդության, մահացել է բնական մահով, սակայն նրա վկայի կյանքը նույնպես առանց փորձությունների չի անցել:

Բաժանել Հիսուսի տառապանքները. ահա այս է աշակերտի բաժինը: Այն փառքը, որ սպասում է մեզ, պատասխանն է այն սիրո, որ Հայրը վերապահում է իրեն հավատացողներին: Այդ փառքը միայն նրա՛ն է պատկանում: Հիսուս իսկ նրա տերը չէ:

Այնպես, ինչպես Մարկոսը նկարագրում է այն պատիվը, որ Աստուծո կողմից «տրվելու է նրանց, որոնց համար այն պատրաստված է» (համար 40), անբավարար է արդի մտածողության տեր մարդու համար: Աստուծո ծրագրով միայն ընտրյալներին նախասահմանված այդ պատիվը այսօր հնաբույր է, ինչպես հնաբույր են շատ բանաձևեր, որոնք, սակայն, ընթացիկ են Աստվածաշնչի մեջ. օրինակ՝ «Աստված ընտրում է», «Աստված խստացնում է սրտերը», «Աստված օրհնում է...» և այլն: Այստեղ կա աստվածաշնչական լեզվից եկող մի դժվարություն. այնքան է ընդգծվում Աստուծո գորովալից նախաձեռնությունը, որ կարծես ժխտվում է մարդու ազատությունը:

Սակայն, երբ կարդում ենք Հին կամ Նոր Կտակարանի պատմությունները՝ առանց դրանցից առանձնացնելու բանաձևերը, նկատում ենք, որ մարդը միշտ ազատ է, և Աստուծո ընտրությունները բոլորովին էլ քմահաճ բաներ չեն: Աստուծո ազատությունը ոչինչ չի վերացնում իր արարածների ազատությունից:

Եթե Աստված Աստված է, կարող ենք նրան վստահել՝ առանց երաշխիքներ կամ հաշիվ պահանջելու նրանից:

65. ԻՇԽԵԼ ԾԱՌԱՅԻ ՊԵՍ
(Մարկ. Ժ 41—45)

Ժ 41 Այդ լսելով՝ տասը առաքյալները սկսեցին բարկանալ Հակոբոսի և Հովհաննեսի վրա:

42 Հիսուս իր մոտ կանչեց նրանց և ասաց. «Գիտեք, որ հեթանոսների մեջ իշխանավորներ համարվածները տիրում են նրանց. և նրանց մեծամեծներն իշխում են նրանց վրա:

43 Իսկ ձեր մեջ այդպես չպետք է լինի. այլ ձեզնից ով կամենա մեծ լինել, թող լինի ձեր սպասավորը.

44 և ձեզնից ով կամենա առաջին լինել, բոլորին ծառա թող լինի.

45 որովհետև մարդու Որդին էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու և տալու իր անձը որպես փրկանք շատերի փոխարեն»:

Մյուս տասը առաքյալները կայրանում են Հակոբոսի և Հովհաննեսի դեմ: Գրվածքը հստակորեն չի ասում, թե ինչ էր նրանց կայրույթի պատճառը: Արդյո՞ք դա հենց առանձնաշնորհյալներ լինելու սկզբունքն էր, որ երկու եղբայրները խնդրում էին Հիսուսից (Մարկ. Ժ 35—40): Այդ դեպքում առաքյալների կայրույթն արդար էր: Կամ, ընդհակառակը, արդյո՞ք պատճառն այն էր, որ նրանք վախենում էին, թե մյուսները «կկանխեն» իրենց: Այդ դեպքում դա շատ ավելի խղճալի մի բան կլիներ...

Դրդապատճառն ինչ էլ եղած լիներ, Հիսուս օգտվում է առիթից՝ հավաքված տասներկու աշակերտներին ուղղելու համար մի հատու ճառ իշխանության խնդրին վերաբերող հարաբերությունների մասին, որ պետք էր հաստատել աշակերտների միջև և... Եկեղեցում: Քրիստոնյաների միջև նվիրապետությունը ճիշտ հակառակն է այն իշխանությանը, որ եղել է Հռոմեական Կայսրության կամ քաղաքային այլ կազմակերպությունների մեջ: Կրոնական իշխանությունը սոսկ ծառայության իշխանություն է: Աստվածաբանները հենց այդպես էլ տեսնում են այն, եթե նույնիսկ դարերի ընթացքում այդ իշխանությունը գործադրվել է ավելի կամ նվազ հաջողությամբ: Չէ՞ որ պապն ինքը կոչվում է «Աստուծո ծառաների ծառա»:

Հիսուսի վերաբերմունքը, որով նա իր անձը դնում է մարդկանց տրամադրության տակ, միակ օրինակն է այն իշխանության, որ քրիստոնյաները կարող են օրինավորապես գործադրել մեկը մյուսի նկատմամբ: Նա եկավ «ծառայելու և տալու իր անձը որպես փրկանք» (համար 45): «Փրկանք» կամ «փրկագին» բառը խրտչեցնող բառ է. մարդ տհաճությամբ է ընդունում նրա ֆինանսական երանգը: Այն մտածել է տալիս ինչ-որ գնի մասին, որ Հիսուս իբր վճարել է իր մահով, այն էլ չգիտենք, թե ում... Իրականում, Մարկոսի տեքստում այս բառի գործածության մեջ կա ազատագրության գաղափարը. ազատագրություն այն գերիների և ստրուկների, որ մենք ենք. սակայն անհրաժեշտ չէ պատկերացնել փրկանք պահանջող ինչ-որ մեկի գոյությունը: Մահանալիս Հիսուս իր անձը ծառա-գերի դարձրեց մարդ-

կանց: Նա այդ արեց, որպեսզի մենք ապատագրվենք ամեն ինչից, որ մեզ գերի է դարձնում. մեղքից, բռնավորությունից և դեռ շատ ուրիշ բաներից:

Հիսուս իրապես ապատագրող է. նրա աշակերտների կողմից գործադրվող իշխանությունն էլ, հետևաբար, ամենից առաջ պետք է լինի ապատագրող իշխանություն:

66. ՎԵՐՋԻՆ ԿԱՆՉՎԱԾԸ
(Մարկ. Ժ 46—52)

Ժ 46 Եկան Երիքով: Եվ մինչ նա Երիքովից դուրս էր գալիս իր աշակերտներով և բազում ժողովրդով, Տիմեի որդին՝ կույր Բարտիմեոսը, նստել, մուրում էր ճանապարհի եզրին:

47 Երբ լսեց, թե Հիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. «Դավթի՛ Որդի, Հիսո՛ւս, ողորմի՛ր ինձ»:

48 Եվ շատերը նրան սաստում էին, որ լռի, իսկ նա առավել ևս աղաղակում էր. «Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»:

49 Հիսուս կանգնեց և հրամայեց, որ կանչեն նրան: Կույրին կանչեցին և ասացին նրան. «Քաջալերվի՛ր, վե՛ր կաց, կանչում է քեզ»:

50 Եվ նա, դեն գցելով իր զգեստները, վեր կացավ-եկավ Հիսուսի մոտ:

51 Հիսուս նրան պատասխանեց և ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ»: Կույրը նրան ասաց. «Ռաբբունի՛, աչքերս թող բացվեն»:

52 Եվ Հիսուս ասաց նրան. «Գնա՛, քո հավատը քեզ փրկեց»: Եվ իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին գնում էր նրա ետևից:

Երիքովը վերջին կայանն է Երուսաղեմից առաջ, ուր գնում են Հիսուս և նրան ուղեկցողները: Ճանապարհորդությունը վերջանում է լավատեսություն ներշնչող մի եղելությամբ: Ավետարանական քիչ դրվագներ այնքան գրավչություն ունեն, որքան կույր Բարտիմեոսի բժշկումը: Հավվագյուտ է նմանապես, որ Հիսուսի հետ մի հանդիպում լինի այսքան հաջող:

Դրվագի սկզբում մի կույր մարդ նստած է ճանապարհի եզրին՝ փաթաթված մի վերարկուի մեջ: Դրվագի վերջում նա կանգնած է հստակ տեսողությամբ և վերարկուն հանած գնում է Հիսուսի ետևից: Այս բոլոր մանրամասնություններն ունեն խորհրդանշական ակնհայտ իմաստ. հասարակությունից դուրս մնացած և խավարի աշխարհում ապրող մի մարդ դառնում է հավատի լույսով լուսավորված աշակերտ: Ի՞նչ բան հարկավոր եղավ, որպեսզի կատարվեր այս փոփոխությունը:

Կույրը ոչնչից չի մեկնում: Հիսուսի ուշադրությունը գրավելու համար նա հեռվից երկու անգամ ձայն է տալիս նրան՝ կոչելով. «Դավթի Որդի»: Սա մի պարզ արտահայտություն չէ, այլ մի տիտղոս է, որ տրվում էր Մեսիային, ինչպես այդ ցույց է տալիս Մարկոսի պատմած հետագա դրվագներից մեկը, որի մեջ Հիսուս մեջ է բերում դպիրների կարծիքը՝ ասելով. «Ինչպե՞ս են ասում դպիրները, թե Քրիստոս Դավթի Որդի է» (Մարկ. ԺԲ 35—37): Բարտիմեոսը, չգիտես ինչպես, Հիսուսի ինքնության մասին արդեն ունի հստակ գաղափար: Այդ իմաստով նա մոտավորապես նույն աստիճանի վրա է գտնվում, ինչպես Պետրոսը Կեսարիայում, երբ ասում էր իր տիրոջը. «Դու Քրիստոսն ես» (Մարկ. Ը 29):

Կույրը նաև սաստվում է. գուցե ամբոխի կողմից, որը պարզապես ցանկություն չունի նրան լսելու. կամ թերևս աշակերտների կողմից, որոնք հրահանգ են ստացել չտարածելու, որ Հիսուս Մեսիան է, և պարտավորություն են զգում այդ հրահանգը գործադրել տալու նաև ուրիշներին (Մարկ. Ը 27—30):

Հիսուս, ընդհակառակը, կանչել է տալիս կույրին: Սա մի շարժումով դեն է գցում իր միակ հարստությունը՝ այն վերարկուն, որը ծածկում էր նրա մարմինը: Քսաներորդ դարի ընթերցողը, որ իր տրամադրության տակ ունի անհրաժեշտ մի հանդերձապահարան, իհարկե դժվար կհասկանա այս մանրամասնության նշանակությունը: Սակայն Մարկոսի ժամանակակից մարդը շատ լավ էր հասկանում, որ Երիքովում մի կույր մուրացիկ հաստատապես ուրիշ ոչինչ չէր կարող ունենալ: Հին Կտակարանում մեծ կարևորություն է տրվում աղքատի վերարկուին: Մովսեսի Օրենքում կա մի շատ գեղեցիկ պատվիրան, որը պարտատերերին պարտավորեցնում է, որ իրենց պարտապաններին թողնեն գոնե մի վերարկու գիշերվա համար.

Եթե գրավես քո ընկերոջ վերարկուն.
Մինչև մայրամուտ ե՛տ դարձրու նրան.
Քանզի ա՛յն է միակ ծածկոցը նրա,
Հանդերձն իր մարմնի, որով պիտի ննջի նա:
(Ելից ԻԲ 25—26)

Բարտիմեոսը, բժշկվելուց իսկ առաջ, Հիսուսին գալու համար իր միակ ունեցվածքը թողնելով՝ իրականացնում է այն, ինչ քիչ առաջ Մարկոսի ավետարանում մի հարուստ մարդ չէր կարողացել անել (Մարկ. Ժ 17—

22): Այդ դրպեից նա միանում է Պետրոսին, որն ասում էր թե՛ ինքն իր մասին և թե՛ մյուս աշակերտների. «Ահավասիկ մենք թողել ենք ամեն բան և եկել ենք քո ետևից» (Մարկ. Ժ 28):

Պատմության ավարտը տպավորիչ է: Հիսուս ընդունում է մուրացկանի հավատը, ոչ միայն իր մասին, որպես Մեսիայի, նրա ունեցած հավատը, այլ նաև այն հավատը, որով նա կարողացավ առաջնորդվել համապատասխան ձևով: Բարտիմեոսը հասնում է լույսին և իր փրկչի հետ բռնում Երուսաղեմի ճանապարհը, չարչարանքների ուղին:

Նրա մասին ավելի ոչինչ չգիտենք: Այստեղ ավարտվում է նրա դերը: Նրա պատմությունն այսուհետև շփոթվում է ամեն մարդու պատմության հետ, ով միջոցներ է ձեռք առնում գնալու Հիսուսի ետևից:

67. ՄԵՍԻԱՅԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ (Մարկ. ԺԱ 1—11)

ԺԱ 1 Երբ մոտեցան Երուսաղեմին, Բեթփագեին և Բեթանիային, Ձիթենյաց լեռան մոտ, նա ուղարկեց իր աշակերտներից երկուսին և ասաց նրանց.
2 «Դուք գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է. և հենց որ այնտեղ մտնեք, կգտնեք մի կապված ավանակ, որի վրա ոչ մի մարդ չի նստել. արձակեցե՛ք այն և բերե՛ք:
3 Եվ եթե մեկը ձեզ ասի. «Այդ ավանակը ինչո՞ւ եք արձակում», կասեք. «Տիրոջը պետք է». և նա իսկույն դրան այստեղ կուղարկի»:
4 Գնացին և գտան ավանակը՝ կապված դռան մոտ, դրսում, փողոցի մեջ, և այն արձակեցին:
5 Եվ այնտեղ կանգնածներից ոմանք ասացին նրանց. «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք այդ ավանակն արձակում»:
6 Եվ նրանք նրանց ասացին, ինչպես Հիսուս ասել էր. ու նրանց թույլ տվին:
7 Ավանակը բերեցին Հիսուսի մոտ. դրա վրա վգեստներ գցեցին, և Հիսուս նստեց դրա վրա:
8 Եվ շատերը իրենց վգեստները փռում էին ճանապարհին. ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում ու գցում ճանապարհի վրա:
9 Եվ նրանք, որ առաջից ու ետևից էին գնում, աղաղակում էին և ասում. «Ոսանն՝ Բարձրյալին: Օրհնյա՛լ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով.
10 Օրհնյա՛լ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն՝ երկնքում և փա՛ռք՝ բարձունքներում»:
11 Եվ Հիսուս մտավ Երուսաղեմ, տաճարը ու նայեց իր շուրջը, ամեն ինչի վրա. և որովհետև երեկոյի ժամ էր, բարձրացավ Բեթանիա՝ Տասներկուսի հետ միասին:

Հրեական ավանդություններից մեկի ցանկությունն է եղել, որ վերջին ժամանակներին Մեսիան Երուսաղեմ մտնի արևելյան կողմից՝ իջնելով Ձիթենյաց լեռնից: Դրա վկաներն են այսօր իսրայելական այն բազմաթիվ ջիրիմները, որոնք իրար կողքի շարված են նրա լանջերին, որպեսզի, վերջնական հարության ժամանակ, այնտեղ պառկած նընջեցյալները առաջինը մասնակցեն այն հաղթական թափորին, որը մուտք է գործելու սուրբ քաղաք:

Մարկոսը և մյուս ավետարանիչները մոտ են կանգնած այս ավանդությանը, երբ նույն ձևով նկարագրում են Հիսուսի մուտքը մայրաքաղաք, որտեղ և վճռվելու է նրա մահը: Նրանց գրվածքներում շատ են Հին Կտակարանին վերաբերող ակնարկությունները: Մարկոսը որոշակիորեն մեջ է բերում 118-րդ Սաղմոսը, որը ծիսական մի երգ է, և որի մասին այն կարծիքը կա, թե կատարվել է Տաղավարահարաց տոնի ժամանակ: Այդ տոնը հրեական տարվա երեք մեծ հանդիսություններից մեկն էր:

Ո՜հ, Տեր, փրկի՛ր, խնդրում եմ.
Ո՜հ, Տեր, առաջնորդի՛ր, խնդրում եմ:
Օրհնյա՛լ լինես, որ գալիս ես Տիրոջ անունով.
Օրհնում ենք քեզ Տիրոջ տանից:
(Սաղմոս ՃԺԸ 25—26)

«Փրկի՛ր, խնդրում եմ» բառերը թարգմանությունն են եբրայեցերեն «Ոսաննա» բառի, որ Մարկոսը մեջբերում է իր մայրենի լեզվով առանց թարգմանելու կարիք զգալու, որովհետև, անկասկած, այդպես էլ այն արդեն անցել էր քրիստոնեական ծեսի մեջ: Եվ ավելի մեծ ուժով ընդգծելու համար, թե Հիսուս Մեսիան է, որը եկել է հաստատելու Թագավորությունը, ավետարանիչը իր կողմից մի նախադասություն է ավելացնում սաղմոսին. «Օրհնյալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է» (համար 10):

Աստվածաշնչական մի ուրիշ գրվածք ևս հստակորեն ստորոգվում է այս դրվագին՝ չնայած որ Մարկոսը որոշակի կերպով չի մեջբերում այն: Հարցը վերաբերում է Զաքարիա մարգարեի գրքում գտնվող մի պատգամի, որը նկարագրում է, թե ինչպես Մե-

սիան, հրեա ժողովրդի գլուխն անցած, գալիս է հաղթանակ և խաղաղություն բերելու մեղմ միջոցներով: Ընտանի և հեզ ավանակը փոխարինում է ամեհի երիվարներին, իսկ պենքերն անհետացած են նրա արքայական զրահավորումից.

Ուրախացի՛ր հույժ, դո՛ւստր Սիոնի,
Ցնցությամբ կանչի՛ր, դո՛ւստր Երուսաղեմի.
Քո թագավորն ահա գալիս է քեզ մոտ,
Արդար է նա ու փրկագործ,
Նստած է նա մի էշի վրա, մի իշուկի:
Նա բնաջինջ պիտի անի
Հեծելազորն Եփրայիմից,
Երիվարներն Երուսաղեմից:
Պիտ խորտակվի ռազմի աղեղն,
Ու ազգաց մեջ պիտի լինի խաղաղություն:
(Զաքարիա Թ 9—10)

Կարելի է այսպես բացատրել Հին Կտակարանից այն մեջբերումները, որոնց ակնարկում է Մարկոսի տեքստը: Դրանք բոլորն էլ կօգնեն միևնույն նպատակին. ցույց տալ, որ Հիսուս Երուսաղեմ է մտնում ինչպես Մեսիան, նա, որ մի քանի օր հետո վերստին դուրս պիտի գնի այնտեղից՝ գնալու համար դեպի տանջանք:

Հիսուս սուրբ քաղաք իր մուտքը պատրաստում է այնպիսի խնամքով, ինչպես հետագայում պիտի պատրաստեր վերջին ընթրիքը (Մարկ. ԺԴ 12—16): Երկու դեպքում էլ երկու աշակերտներ պարտականություն են ստանձնում նախապատրաստություններ կատարելու և ամեն ինչ գտնում են իրենց տիրոջ ցուցումների համաձայն: Հիսուս գիտի, թե ուր է գնում. չարչարանքները հորիզոնում են. նա ոչ մի կերպ չի փախչում դրանցից: Աշակերտները, ընդհակառակը, չեն հասկանում նշանակությունն այն բանի, ինչ իրենց կարգադրվում է անել: Հիսուս զգուշանալով, որպեսզի իրեն դեպի խաչը տանող ճանապարհի մեկ կողմից մյուսը չանցնեն նրանք, առաջիկ նրանց պահում է սուսկ հրահանգներ գործադրողի դերում:

Դրան հակառակ, երբ խնդիրը վերաբերում է նրա արքայական վեհությունը վերհանող գործեր կատարելուն, նրանք իսկույն պատրաստ են նախաձեռնությունների դիմելու. խեղճ ավանակի մեջքին կտորներ գցել, ծառի ճյուղերից և զգեստներից կազմված գորգեր փռել ճանապարհին, հանդիսավոր բացականչություններ անել և այլն:

Նրանց վերաբերմունքը թվում է միաժամանակ ճիշտ (որովհետև Հիսուս արժանի է այդ պատիվներին) և սխալ (որովհետև այդ պատիվները մի տեսակ ծաղր են՝ ուղղված մի մարդու, որ գնում է դեպի տանջանք): Այս հատվածը չի կարդացվում առանց որոշ սրտնեղության: Եվ երբ հասնում ենք ավարտին, այդ սրտնեղությունը որոշապես վերածվում է մտահոգության (համար 11): Հիսուս քննում է, թե ինչ է տեղի ունենում տաճարում և մեկնում այնտեղից առանց մի բառ ասելու: Զգացվում է, որ պատրաստվում է ինչ-որ վտանգավոր բան:

68. ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԽՈՍՔ ՄԻ ԹԶԵՆՈՒ ՄԱՍԻՆ (ԺԱ 12—14)

ԺԱ 12 **Հաջորդ օրը, մինչ Բեթանիայից դուրս էին գալիս, Հիսուս քաղցած էր:**
13 **Հեռվից մի տերևապից թզենի տեսնելով՝ եկավ, որ թերևս նրա վրա մի բան գտնի. և երբ նրան մոտեցավ, ոչինչ չգտավ, այլ միայն՝ տերև, որովհետև տակավին թզի ժամանակը չէր:**
14 **Հիսուս խոսքը նրան ուղղեց և ասաց. «Էլ քեզնից ոչ ոք պտուղ չուտի հավիտյան»: Եվ նրա աշակերտները լսում էին:**

Կոնտեքստից դուրս՝ անիծված թզենու այս պատմությունը անհեթեթ մի բան է: Այն մտածել է տալիս երիտասարդ Հիսուսի քմահաճությունների մասին, որը, տեղի-անտեղի, օգտագործում է իր խուքի կարողությունը. երեխայական բաներ, որոնք մեծ հաճույքով նկարագրված են մեր թվագրության 5-րդ կամ 6-րդ դարերում գրված պարականոն որոշ ավետարաններում: Դա այնքան էլ նման չէ Նոր Կտակարանի Քրիստոսին:

Կոնտեքստը, սակայն, տալիս է այլ բացատրություն: Հիսուսի՝ Երուսաղեմ գալու հաջորդ օրն է: Նախորդ օրը նա երկարորեն նայել էր, թե ինչ է տեղի ունենում տաճարում, ապա մեկնել էր այնտեղից առանց ոչինչ ասելու: Հետևյալ օրը առավոտյան նա տակնուվրա պիտի աներ ամեն ինչ, որ վաճառքի առարկա էր դարձել այդ շենքում, որը պետք է լիներ «աղոթքի տուն», և որի պատասխանատուները, սակայն, այն վերածել էին «ավազակների որջի» (Մարկ. ԺԱ 15—19): Տաճարը չի տալիս այն պտուղները, որ պետք է տար:

Ահա այստեղ է, որ մեջ է մտնում թզենու դրվագը:

Հին Կտակարանում թզենին հաճախ հանդես է գալիս որթատունկի հետ միասին որպես Ավետյաց երկրի բարգավաճման նշան: Ինքը որթատունկը Եսայի մարգարեի կողմից համեմատվում է Իսրայելի հետ, որը պետք է տար վարդակարմիր խաղողներ և որը, սակայն, իր բերում անհավատարմությունների պատճառով, տալիս է վատ հատիկներ, որոնցով միայն կարելի է վատո-

րակ գինի պատրաստել (ըստ Եսայու Ե 1—7. տես նաև Մարկ. ԺԲ 1—12): Համանման ձևով, առաջին սաղմոսում, Տիրոջ Օրենքը գործադրող մարդը նմանեցվում է արգասաբեր մի ծառի.

Նա նման է ջրերի եզրին տնկված ծառի,
Որ պտուղն իր պիտի տա իր ժամանակին.
Նրա տերևը չպիտի թափվի բնավ,
Եվ ինչ որ անելու է, պիտի հաջողվի նրան:
(Սաղմոս Ա 3)

Մյուս կողմից՝ Մարկոսն արդեն պտղի մասին խոսել է սերմնացանի առակում. պտուղ, որ տալիս են նրանք, ովքեր լսում են խոսքը և ընդունում այն (Մարկ. Դ 1—9 և Դ 13—20):

Անպտուղ թզենին ներկայացվում է բոլորովին այլ բան, քան ծառն ինքը: Նրա մասին եղած առակը մի տեսակ գործադրության մեջ եղող առակ է: Այն խոսքը, որ Հիսուս ուղղում է նրան, պատկանում է Երեմիայի կամ Եզեկիելի կողմից կատարված խորհրդանշական գործերի շարքին. մարգարեն ասում և մի առարկայով հրապարակավ անում է այն, ինչ Աստված պիտի անի Երուսաղեմի կամ Իսրայելի համար: Դա մարդկանց աչքերն ու ականջները բաց անելու մի ձև է այն անխուսափելի ապագայի առջև, որ նրանք պատրաստել են իրենց համար:

Երբ Հիսուս իր խոսքն ուղղում է թզենուն, աշակերտներն այնտեղ են և լսում են (համար 14): Նա պատկերավոր ձևով հայտնում է նրանց, որ հրեական աշխարհի կարևոր մեկ հաստատությունը, անկասկած տաճարը, չի տալիս այն պտուղները, որ Աստված կարող էր սպասել նրանից, և նա ընդմիշտ մնալու է անպտուղ:

Գրվածքը չի ասում, թե նրանք ինչ հասկացան այդ պահին: Հավանաբար նրանք մնացին խորապես շփոթված, ճիշտ այնպես, ինչպես ինքնաբերաբար լինում է Մարկոսի ընթերցողը, որ համակրանքով է լցված այդ դժբախտ թզենու նկատմամբ, որի միակ հանցանքը թույլ չունենալն է գարնանը, թվի եղանակից ամիսներ առաջ: Հին Կտակարանով սնված խորհրդածությունը միայն թույլ է տալիս առաջին հակազդեցություններից այն կողմ անցնել և հասնել այս դրվագի խորհրդանշական իմաստին:

69. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ՏԱՃԱՐԸ (Մարկ. ԺԱ 15—19)

ԺԱ 15 Եկան Երուսաղեմ: Հիսուս տաճար մտնելով՝ սկսեց դուրս հանել տաճարում գտնվող վաճառականներին ու գնորդներին և լումայափոխների սեղանները ցրեց ու աղավնեվաճառների աթոռները շուռ տվեց:

16 Եվ չէր թողնում, որ որևէ մեկը տաճարի միջով նույնիսկ որևէ անոթ անցկացնի:

17 Եվ ուսուցանում էր նրանց ու ասում. «Գրված է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն է կոչվելու. իսկ դուք այն դարձրել եք ավազակների որջեր»:

18 Քահանայապետներն ու դպիրները լսեցին այս և մի հնար էին փնտրում, թե ինչպես կորստյան մատնեն նրան, բայց վախենում էին նրանից, որովհետև ամբողջ ժողովուրդը զարմացած էր նրա ուսուցման վրա:

19 Երբ երեկո եղավ, քաղաքից դուրս ելան:

Երուսաղեմի տաճարը չէր սահմանափակվում միայն մեկ շենքով: Դա շինությունների մի համալիր էր՝ համախմբված մի ընդարձակ ուղղանկյուն հարթավայրի վրա, կենտրոնական մի սրբարանի շուրջը, որը բաղկացած էր երկու սրահներից՝ Սրբությունը և Սրբություն Սրբոցը: Սրբարանը սահմանափակված էր գոտիներով, որոնք ցածր խավի մարդկանց արգելում էին շատ մոտենալ նրան: Կենտրոնում քահանաների գավիթն էր, ապա հրեա տղամարդկանց գավիթը, այնուհետև հրեա կանանցը և վերջապես, շուրջբոլորը, հեթանոսներինը:

Ահա այս տարբեր գավիթներում էին վաճառք անում այն մարդիկ, որոնց մասին վկայում է ավետարանը: Դրանք զոհագործման համար նախատեսված կենդանիներ կամ արմտիք վաճառողներ էին և մանավանդ լումայափոխներ, որովհետև տաճարում միայն հրեական փող էին ընդունում: Հռոմեական փողը, պիղծ համարվելով, մեծ մասամբ օգտագործվում էր առևտրական գործարքների համար:

Հիսուս նախորդ օրը երեկոյան ուշադրությամբ դիտել էր այդ բարեպաշտիկ գործունեությունը, որով կլանված էին բոլորը: Բայց նա, ավելի քան ուրիշները, չէր կարողանում տանել այդ դրությունը: Բեթանիայում, որը մայրաքաղաքից մի քանի կիլոմետր հեռու էր, մի գիշեր անցկացնելուց հետո, վերադառնալով Երուսաղեմ, նա տաճարի շրջափակում լցվում է ավետարանում հայտնի ամենասաստիկ կայրությամբ:

Նրա այդ արարքը, սակայն, միակը չէ: Այն ունի իր փառավոր նախընթացները: Նրանից առաջ մարգարեները մեկը մյուսի ետևից դեմ էին կանգնել այն բանի, ինչ տեղի էր ունենում տաճարում: Կրոնական

պարտականությունների կատարման մեջ նրանք մատնանշել էին կոհեր մատուցողների ցուցաբերած բարեխղճությունը, որոնց սրտերը, սակայն, հեռու էին Աստծուց: Երեմիա մարգարեն իր ժամանակակիցներին ուղղել էր հետևյալ հարցը, որ Հիսուս կրկնում է.

Մի՞թե ավազակների որջ եղավ իմ այս տունը,
Որի վրա կոչված է իմ անունը:

(Երեմիա Է 11)

Աքսորից վերադառնալուց մի քանի տասնամյակ հետո, Երուսաղեմի կառավարիչ Նեեմին ևս հանդես էր բերել ուժեղ կեցվածք: Այդ ժամանակաշրջանի քահանայապետը իր գործակիցներից մեկին թույլ էր տվել տեղավորվել պաշտամունքի համար նախատեսված շենքերից մեկում: Կառավարիչը, չհանդուրժելով այդ, շենքը ապօրինի կերպով կբաղեցնող մարդու գույքը վերցրել և մեծ աղմուկով շպրտել էր հարևան փողոցը (ըստ Նեեմիի ԺԳ 4—9): Հարկավոր է առողջացնել վատթարանալ սկսող իրավիճակները:

Սակայն ո՞րն է Հիսուսի կայրության դրդապատճառը Մարկոսի ավետարանում: Արդյոք այդ ամբողջ ապօրինի առևտո՞ւրը, որը տեղի էր ունենում Երուսաղեմի տաճարի շուրջը և որը հաճախ համեմատվել է այժմյան ուխտագնացության կենտրոններում տեղի ունեցածի հետ: Անկասկած: «Տաճարի առևտրականներ» արտահայտությունը արդեն իսկ գրեթե առածի կարգ է անցել:

Այսուհանդերձ, թվում է, թե նրա մոլեգին կայրության պատճառն ավելի որոշակի է: Հին Կտակարանի այն հատվածը, որ նա մեջ է բերում ապացուցելու համար իր արարքի արդարացիությունը, գտնվում է Եսայի մարգարեի գրքի վերջում: Մարգարեն ավետում է գալիք նոր ժամանակների մասին, երբ հրեա և հեթանոս հավասար են լինելու Աստուծո առջև, և Օրենքը պահող ամեն մարդ մաս է կազմելու ընտրյալ ժողովրդին.

Օտարազգիներ, որ եկել Տիրոջն են հարել՝
Պաշտելու նրան և սիրելու անունը նրա,
Ծառաներ և աղախիններ լինելու նրան,
Բոլոր նրանք, որ իմ շաբաթն են պահելու ու չեն պղծելու այն
Եվ [հաստատ] են մնալու իմ ուխտի մեջ,
Նրանց բոլորին տանելու եմ լեռն իմ սրբության
Եվ ուրախացնելու տանն իմ աղոթքի:
Նրանց կոհերն ու ողջակեզները նրանց
Ընդունելի են լինելու իմ սեղանի վրա,
Քանզի տունն իմ կոչվելու է տուն աղոթքի
Բոլոր ազգերի համար:

(Եսայի ԾԶ 6—7)

Արդ, այն ժողովուրդը, որը կարդում է այս գրվածքը և կարդում հենց Երուսաղեմի տաճարում, միաժամանակ այն ժողովուրդն է, որը ոչ-հրեաների նկատմամբ ցուցաբերում է անընդունելի մի այլամերժություն: Հեթանոսները արգելափակված են տաճարի ամենաարտաքին գավիթներում, իսկ հռոմեական փողը չի անցնում սրբազան գոտում, մինչդեռ սովորական ժամանակ բոլորն օգտվում են դրանից: Զարմանալի չէ, հետևաբար, որ Հիսուս պատասխանատու համարի մասնավորապես լումայափոխներին:

Իրականում, ինչ որ Հիսուս դատապարտում է, կեղծավորությունն է, մանավանդ ոչ-հրեաների հանդեպ դրսևորվող կեղծավորությունը: Նախապես նա իր աշակերտներին հայտարարել էր, որ անմաքուր ուտելիքներ չկան (Մարկ. Է 14—23): Նա նույնիսկ հեթանոսների համար կատարել էր հացերի բազմացում, նման հացերի այն բազմացմանը, որից օգտվել էին իսրայելացիները (Մարկ. Ը 1—9): Կեղծավոր այլամերժությունը, որ դրսևորվում է տաճարում, անհանդուրժելի է նրա համար: Եթե հեթանոսները դուրս թողնվեին պարզապես նրա համար, որպեսզի հավատացյալները կարողանային ավելի լավ աղոթել իրար միջև, դա դեռ հասկանալի կլիներ: Բայց երբ տեսնում ես, թե ինչի համար է արվում այդ...

Այո՛, տաճարը անհավատարիմ է աղոթքի տուն լինելու իր կոչմանը, տուն, որտեղ բոլորը կարող են գալ աղոթելու: Հիսուս այդ բանը հայտարարում է բարձրաձայն ու հստակ և ըստ այնմ էլ վերաբերվում: Եվ, իհարկե, Երուսաղեմի քահանայական շրջանակները պատրաստվում են դիմելու վրիժառության:

70. ՉՈՐԱՑԱԾ ԹԶԵՆԻՆ (Մարկ. ԺԱ 20—25)

ԺԱ 20 **Հաջորդ օրը, առավոտյան, մինչ մոտովն էին անցնում, թզենին արմատից չորացած տեսան:**

21 **Պետրոսը հիշեց և ասաց նրան. «Ռաբբի՛, ահավասիկ թզենին, որին անիծեցիր, չորացել է»:**

22 **Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Աստուծո հանդեպ հավատ ունեցեք:**

23 **Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ այս լեռանն ասի՝ ե՛լ և ծովն ընկի՛ր, և իր սրտում չկասկածի, այլ հավատա, թե ինչ որ ասում է, կլինի, նա ինչ էլ ասի, կլինի:**

24 **Դրա համար ասում եմ ձեզ. ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, որ ստացել եք այն, և կտրվի ձեզ:**
25 **Եվ երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները»:**

Ահա նորից այն թզենին, որ Հիսուս անիծել էր նախորդ օրը: Այսուհետև նա այլևս երբեք պտուղ չի տա, քանի որ ամբողջովին չորացել է: Նրա վրա արտասանված մարգարեական խոսքը կատարվեց (տես վերը Մարկ. ԺԱ 12—14): Թզենուն վերաբերող երկու դրվագները հաղորդակցվում են միմյանց տաճարի դրվագի միջոցով, և ամբողջը կազմում է մի տեսակ ներմուծյալ կամ ներփակյալ հորինվածք, որին արդեն հանդիպել ենք Մարկոսի մոտ (տես Մարկ. Գ 1—6):

Ա. **Մարգարեական խոսք մի թզենու մասին** (ԺԱ 12—14).
Բ. **Անհավատարիմ տաճարը** (ԺԱ 15—19).
Ա. **Չորացած թզենին** (ԺԱ 20—25).

Երուսաղեմի տաճարի կործանումը մարգարեական ձևով կանխատեսվեց ծառի չորացումով: Ամեն ինչ, որ անպտուղ է, չի կարող անվերջ ապրել որպես մակաբույծ՝ չորացնելով հողը կամ մարդկանց:

Պետրոսը, սակայն, կարմանում է իր խոսքի կարողության միջոցով Հիսուսի ձեռք բերած արդյունքի վրա (համար 21): Այն ժամանակ տերը իր աշակերտների ուշադրությունը նորից է հրավիրում հավատի զորության վրա, որ արդեն բազմիցս ընդգծված է Մարկոսի ավետարանում: Քանի՞ անգամ նա նույն խոսքը չի ասել այն մարդկանց, որոնք գալիս էին իր մոտ բժշկվելու. «Քո հավատը քեզ փրկեց» (տես Մարկ. Ե 34 կամ Ժ 52): «Ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է» (Մարկ. Թ 23):

Ապա հետևում է մի փոքրիկ ճառ, որ ավետարանիչը շարադրում է՝ օգտագործելով ճարմանդ-բառերի կամ կեռ-բառերի տեխնիկան. Հիսուսի կողմից գործածված առանձին նախադասություններ դրված են մեկը մյուսի ետևից շնորհիվ այն բառերի, որոնք ընդհանուր են այդ նախադասությունների համար (տես Մարկ. Թ 38—42): Նախ շոշափվում է հավատի թեման (հունարենում «հավատ» և «հավատալ» բառերը նույն արմատից են).

—«Աստուծո հանդեպ **հավատ** ունեցեք» (համար 22).

—«Իր սրտում չկասկածի, այլ **հավատա**» (համար 23).

—«**Հավատացե՛ք**, որ ստացել եք այն» (համար 24):

Այնուհետև գալիս է աղոթքի թեման.

—«Ամեն ինչ, որ **աղոթք** անելով խնդրեք...» (համար 24).

—«Եվ երբ **աղոթքի** կանգնեք...» (համար 25):

Այս նախադասություններից շատերը հանրահայտ են: Մասնավորապես շատ է հիշվում «լեռներ տեղափոխող հավատին» վերաբերող նախադասությունը (համար 23), որը առածի կարգ է անցել: Պատկերացնենք Հիսուսին այդ նախադասությունն ասելիս՝ կանգնած Ձիթենյաց լեռան գագաթներից մեկի կամ տաճարի բլրի վրա, որ երևում է դիմացը, հովտի վերևում: Մեռյալ ծովի վիթխարի ջրափոսը շատ մոտ է: Եթե Հիսուս աներ այն, ինչի մասին խոսում է, ինչպիսի՞ հոյակապ տակնուվրայություն կլիներ...

Հավատի զորությունն անսահման է, սակայն ի՞նչ աստիճանի պետք է դարձի գալ՝ հասնելու համար իսկապես իսկական հավատի: Մարդ պետք է գիտակցությունն ունենա այն ամենի, ինչ արդեն ստացել է, որպեսզի դարձյալ ստանա (համար 24): Պետք է ոչ մի քինախնդրություն չունենա իր եղբայրների հանդեպ, որպեսզի ճշմարիտ հաղորդակցության մեջ լինի Աստուծո հետ (համար 25):

Նման պահանջներ գնում-միանում են «Հայր մեր»-ի պահանջներին, որ Մարկոսը գրի չի առել: Այդ պահանջները ցույց են տալիս աշակերտներին, թե այսուհետև ինչպես պետք է աղոթել, քանի որ ավանդական «աղոթքի տունը»՝ Երուսաղեմի տաճարը, պիտի անհետանա ըստ այն մարգարեական կանխատեսության, որը տեղի ունեցավ անպտուղ մի թզենու մահով:

(Շարունակելի)